

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/3

24 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Պրոդ-Ալ» ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 6112161 ակտի դեմ:

«Պրոդ-Ալ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

«Պրոդ-Ալ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) 2015 թ-ի հունվար ամսին Հայաստանի Հանրապետություն է ներմուծել հիգիենայի պարագաներ համաձայն ԱՏԳ ԱԱ 33051000, 33059000, 33049900 և 34011100 դասակարգման կոդերի: Ներմուծված ապրանքատեսակներն իրենց փաթեթավորմամբ, շալցված կամ այլ կերպ տարայավորված լինելով ի սկզբանե նախատեսված չեն եղել մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար, դրանք մեկ հարկային հաշվի հիման վրա հանձնվել են պատվիրատու «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ին, որը զբաղվում է հյուրանոցային գործունեությամբ և ապրանքն օգտագործում է իր կարիքների համար:

Ներմուծված ապրանքների մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար նախատեսված չլինելու հանգամանքը բացահայտվել է դեռևս Հ 503 ԲՄՀ-ում, որտեղ ապրանքի բնութագրության մեջ նշված է, որ բոլոր ապրանքների վրա տպագրված է «Hotel National Armenia»: Բացի այդ, ապրանքներն այն տարաներով, որով ներմուծվել և հանձնվել են պատվիրատուին, կիրառվում են հյուրանոցներում սպառման, այլ ոչ թե մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մանրածախ առևտուրն իրականացվում է խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի առևտրի կետերում, առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնխաժներում), ցուցահանդես-վաճառքի կազմակերպման և բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերի, շրջածախ առևտրի, էլեկտրոնային կապի, դիլերների միջոցով և ավտոմատներով:

Այսինքն, մանրածախ առևտուրն իրականացվում է սպառողների անորոշ շրջանակի սպառողական կարիքները բավարարելու համար, նրանց հետ հրապարակային պայմանագիր կնքելու միջոցով:

Մանրածախ առևտրի հասցեատերն անորոշ թվով անձինք են, որոնց առաջարկվում է ապրանքը, իսկ սույն դեպքում, Ընկերության կողմից բերված ապրանքի վրա կատարված է այնպիսի գրառում, որը բացառում է դրանց վաճառքը մանրածախ առևտրի ոլորտում, դրանք մատակարարման պայմանագրի հիման վրա հանձնվել են «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ին, ում համար որ ի սկզբանե նախատեսված է եղել դրանց հատուկ փաթեթավորումը, շալցումը կամ այլ ձևով տարայավորումը:

«Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ն պատվիրել է հենց «Hotel National Armenia» գրառմամբ ապրանքներ և հենց այդ տեսքով էլ Ընկերության կողմից դրանք ներմուծվել են «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ի համար և հանձնվել վերջինիս:

Այսպիսով, ապրանքների վրա առկա հատուկ գրառումը բացառում է դրանք սպառողներին վաճառքի նպատակով ցուցադրելը, ինչպես նաև մանրածախ առևտրին բնորոշ վաճառք կազմակերպելը:

Հատկանշական է, որ Ընկերության ներկայացրած С 503 ԲՄՀ-ում (մաքսային հայտարարգրում) ապրանքների նկարագրության մեջ հստակորեն նշված է, որ ապրանքները փաթեթավորված են «Hotel National Armenia» տպագրությամբ, այսինքն, Ընկերությունն ի սկզբանե բացահայտել է, այդ ապրանքների մատակարարման կոնկրետ նպատակը, այն է՝ դրանց կոնկրետ ընկերության սպառման համար նախատեսված լինելը և, որ դրանք չեն կարող նախատեսված լինել մանրածախ առևտրում վաճառքի համար: Հենց այն հանգամանքը, որ ապրանքը չէր կարող ձեռք բերվել որևէ այլ սպառողի կողմից, բացի «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ի, վկայում է այն մասին, որ այն նախատեսված չի եղել մանրածախ առևտրի համար և անորոշ թվով սպառողների կարիքները բավարարելու համար:

Ելնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և մեկնաբանելով Օրենքի 9.2 հոդվածի դրույթները, գալիս ենք այն եզրահանգման, որ դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանակը սահմանափակվում է այդ ապրանքների մանրածախ առևտրի համար նախատեսված լինելով, ուստի հատուկ որևէ ընկերության սպառման համար փաթեթավորված ապրանքների մատակարարումը այդ ընկերությանը չի կարող դիտվել որպես մանրածախ առևտուր, իսկ ապրանքն էլ մանրածախ առևտրի համար նախատեսված:

Միաժամանակ Ակտում առկա է նաև սխալ կապված դրոշմավորման ենթակա ապրանքների ծավալի հետ, հետևաբար Տեսչությունը Օրենքի 9.2 հոդվածը սխալ է կիրառել նաև դրոշմավորման ենթակա ապրանքների ծավալը որոշելու հարցում:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 6112161 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 18.08.2015 թ-ի թիվ 6112161 հանձնարարագրի համաձայն «Պրոդ-Ալ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 6112161 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Պրոդ-Ալ» ՍՊԸ-ում 19.08.2015 թ-ին իրականացված է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, ընկերությունը իրականացրել է ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 ծածկագրերին դասվող չդրոշմապիտակավորված ապրանքների վաճառք՝ համաձայն 11.05.2015 թ-ի թիվ Ա7900656288 հարկային հաշվի:

Ընկերության բողոքում բերված հիմնական փաստարկը վերաբերվում է նրան, որ Ակտում հիշատակված ծածկագրերին դասվող ապրանքները նախատեսված չեն եղել մանրածախ առևտրի համար:

Հարկ է նշել, որ դեռևս «Պրոդ-Ալ» ՍՊԸ 10.09.2015 թ-ի առցանց գրությամբ կատարված հարցմանը տրված պատասխան գրությամբ պարզաբանվել է, որ ընկերության կողմից ներմուծվող ապրանքները, որոնք ներառված են Օրենքի 9.2-րդ հոդվածի աղյուսակում, ենթակա են պարտադիր դրոշմավորման, անկախ այն

հանգամանքից, թե դրանք ինչ եղանակով են իրացվում՝ մանրաձախ, թե մեծաձախ առևտրի միջոցով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ սույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափաճարաված), շալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրաձախ առևտրի ոլորտում իրացման համար»:

Տվյալ դեպքում ՀՀ տարածքում իրացվող Օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակների պարտադիր լինելը վերաբերվում է այդ ապրանքների փաթեթավորմանը (չափաճարավորմանը), շալցմանը կամ այլ կերպ տարայավորմանը ներկայացվող պահանջին:

Իր հերթին, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1-րդ հոդվածի համաձայն. «1. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարման ենթակա (օտարվող)՝ սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:

2. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն են կրում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ անձինք) և Հայաստանի Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք»:

Քննարկվող դեպքում «Պրոդ-Ալ» ՍՊԸ կողմից Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել Օրենքի 9.2-րդ հոդվածի աղյուսակում նշված ապրանքներ, որոնք 11.05.2015 թ-ին դուրս գրված թիվ Ա7900656288 հարկային հաշվով օտարվել են «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ին:

Վերոգրյալ իրավանորմների դրույթներից հետևում է, որ «Պրոդ-Ալ» ՍՊԸ-ն թե ապրանքները ներմուծելիս և թե դրանք «Պլազա Սիստեմս» ՓԲԸ-ին օտարելիս, կրել է համապատասխան ապրանքները դրոշմապիտակավորելու պարտականություն, ինչը, սակայն, նրա կողմից չի իրականացվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 6112161 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այս ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչապետի դաստարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ